



ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

26.01.2018թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/01

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ խորհուրդ)՝ քննելով «Վազա Ֆարմ» ՍՊԸ-ի 08.01.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2018/01 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. «Վազա Ֆարմ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Վազա Ֆարմ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 08.01.2018թ. խորհրդին ներկայացրած բողոքով հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար «Դեղորայքի» ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ 9/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ «այսուհետ՝ Ընթացակարգ», որին մասնակցելու նպատակով «Վազա Ֆարմ» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել: Ընկերությունը Ընթացակարգի թիվ 1-ին, 4-րդ և 6-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից: Այնուհետև սահմանված եռօրյա ժամկետում Ընկերությունը ներկայացրել է հրավերով պահանջված հավելված 6-ը և 6.1-ը: Սակայն գնահատող հանձնաժողովի կողմից ներկայացված փաստաթղթերը որակվել են հրավերի պահանջներին չհամապատասխանող և տրամադրվել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ժամկետը՝ անհամապատասխանությունները շտկելու համար: Ընկերությունը սահմանված ժամկետում կրկին ներկայացրել է նշված

հավելվածները՝ անհրաժեշտ շտկումներով հանդերձ, սակայն գնահատող հանձնաժողովը մերժել է Ընկերության հայտը, կատարված շտկումները ոչ լիարժեք համարելու պատճառաբանությամբ <մանրամասները արձանագրված են գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 5 արձանագրության 1.2 կետով>:

Ընկերությունը հայտնել է, որ նման որոշման հետ համաձայն չէ և գտնում է, որ հանձնաժողովը գործել է ոչ իրավաչափ՝ խախտելով Ընկերության իրավունքները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունների մասով Ընկերությունը հայտնել է հետևյալը.

Ընկերությունը պահանջված 6 և 6.1 հավելվածները ներկայացրել է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված /սկանավորված/ տարբերակով:

Հարվերի 2-րդ մասի 2-րդ կետով սահմանված են այն փաստաթղթերը, որոնցից բաղկացած է հայտը: Դրանք են՝ հավելված 1,2, 2.1,3,4,5 և 10-ը: Գնումների մասին ՀՀ օրենսդրության, ինչպես նաև հրավերի պահանջների համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է մինչև հայտերի բացման նիստը, ինչը և արել է մասնակիցը: Այսինքն, հայտեր բացվելուց հետո ներկայացվող փաստաթղթերը չեն կարող հայտ համարվել: Միայն հայտերը բացվելուց հետո, երբ մասնակիցը զբաղեցնում է առաջին տեղը, ներկայացվում են հրավերի 2-րդ մասի 3-րդ կետով սահմանված որակավորումը հիմնավորող փաստաթղթերը, որոնք էլեկտրոնային համակարգում ներառված չեն հայտի կազմի մեջ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <Գնումների գործընթացի կազմակերպման> կարգի 32-րդ կետի 12-րդ կետի համաձայն՝ էլեկտրոնային եղանակով համարումներն իրականացվում են տեղեկություններն էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների, որի ժամանակ ծանուցումներն իրականացվում են թղթային եղանակով: Հրավերով և հայտով նախատեսվում են պատվիրատուի և մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեները: Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի արտատպումը պետք է տեսանելի լինի փաստաթղթի վրա, իսկ հավաստագիրը՝ գետեղված «Նույնականացման քարտերի՝ մասին» Հայաստանի Հանրապետության

օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով: Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Այս պահանջը ներառված է նաև հրավերի 1-ին մասի 8.19 ենթակետում:

Այսինքն, օրենսդրությամբ հստակ շարադրված է այն, որ Մասնակիցը էլեկտրոնային փոստի միջոցով տեղեկությունները /փաստաթղթերը/ ուղարկում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ կամ բնօրինակ փաստաթղթից արտատպված /սկանավորված/ տարբերակով, ինչը և կատարել է Ընկերությունը:

Ընկերությունը 6.1 հավելվածում հրավերի տեխնիկական բնութագրի <Ծանոթություն> մասով սահմանված դրույթները չներառելու, ինչպես նաև 6.1 հավելվածում դեղաձևը չնշելու վերաբերյալ հայտնել է հետևյալը.

Պայմանագրի նախագծի հավելված 1-ում՝ տեխնիկական բնութագրում, պատվիրատուն ներկայացրել է հետևյալ կառուցվածքը.

Զ/հ	Ապրանքի CPV անվանում	Միջազգային համընդհանուր (ջենեթիկ) կամ ակտիվ բաղադրատարրերի անվանումները	Տեխնիկական հատկանիշներ		ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆԸ	ԱՐՏԱԴՐՈՂԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԾԱԳՄԱՆ ԵՐԿԻՐԸ
			Դեղաձևը	Դեղաչափը և թողարկման ձևը (փաթեթավորումը)			
1.	Ամպիցիլին j01ca01, s01aa19	Ամպիցիլին (ամպիցիլինի նատրիում), ampicillin (ampicillin sodium)	Դեղափոշի ներարկման լուծույթի	1000մգ, ապակե սրվակներ			

Ծանոթություն.

- Դեղամիջոցների մնացորդային պիտանելիության ժամկետները հանձման պահին պետք է համապատասխանեն ՀՀ կառավարության 02.05. 2013թ. թիվ 502-Ն որոշման 7-րդ կետի պահանջներին, մասնավորապես 2,5 տարի և ավելի պիտանելիության ժամկետ ունեցող դեղերը հանձման պահին պետք է ունենան առնվազն 2 տարի մնացորդային ժամկետ /ա ենթակետ/, իսկ մինչև 2,5 տարի պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքերը՝ առնվազան պիտանելիության ժամկետի 2/3-ը /բ ենթակետ/:

- Մատակարարման ժամանակ անհրաժեշտ է ներկայացնել մատակարարված ապրանքատեսակների խմբաքանակի որակի սերտիֆիկատ:

- Մասնակցի առաջարկում դեղաձևի թողարկման ձևը (փաթեթավորումը) կարող է ներկայացվել ՀՀ գրանցված դեղերի պետական գրանցամատյանում (ոեեստր) առկա տվյալ դեղաձևի ցանկացած փաթեթավորմամբ /հիմք՝ ՀՀ կառավարության 02.05.2013թ. թիվ 502-Ն որոշմամբ հաստատված չափորոշիչների 3-րդ կետի 1) ենթակետ:

- Մատակարարման վայրը՝ ՀՀ ՊՆ 73014 գորամաս (ք. Աբովյան):

Վերջին երեք սյունակները լրացվում են մասնակցի ներկայացրած տվյալների հիման վրա:

Ընթացակարգի հրավերով սահմանված է 6.1 հավելվածի կառուցվածքը, որտեղ ներառված է հետևյալ աղյուսակը.

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	անվանումը	ապրանքային նշանը	արտադրողի անվանումը	ծագման երկիրը	տեխնիկական բնութագրերը

Ընկերությունը հայտնել է, որ այստեղ որևէ պահանջ չկա հենց դեղաձևը պարտադիր նշելու վերաբերյալ, բացի այդ պայամանագրի նախագծի վերջին նախադասությունը <Վերջին երեք սյունակները լրացվում են մասնակցի ներկայացրած տվյալների հիման վրա> հստակ ապացուցում են այն, որ մասնակիցների առաջարկներից որպես անհրաժեշտ բովանդակային տվյալներ վերցվելու են <Ապրանքային նշանը>, <Արտադրողի անվանումը> և <Ծագման երկիրը>:

Ընկերությունը հայտնել է, որ ինչ վերաբերում է «Ծանոթություն» մասում նշվածին, ապա այդ բառը ինքնին արդեն նշանակում է այն, որ մասնակիցը միայն պետք է ծանոթանա ներկայացված բովանդակությանը, դրանով իսկ ստանձնելով նշվածով իրեն վերապահվող պարտականությունները և այլ գործողություն անելու անհրաժեշտություն չկա: Հստակ հասկանալի է, որ այդ պահանջները ընդհանուր են բոլոր չափաբաժինների համար, միանշանակ պարտադիր են և փոփոխման ոչ ենթակա, ուստի չեն կարող որևէ մասնակցի այլ առաջարկներ ոչ արվեն և ոչ էլ ընդունվեն: Ընդ որում այդ պիտանելիության ժամկետների վերաբերյալ պահանջները ՀՀ կառավարության 02.05.2013թ. թիվ 502-Ն որոշման պահանջ են, առկա են դեղորայքի գնման հետ կապված բոլոր հրավերներում, սակայն ոչ մի այլ պատվիրատու նման ձևական պահանջ և անտեղի մոտեցումներ չի ցուցաբերում:

Ընկերությունը հավելված 6.1-ը լրացրել է ամբողջովին, այնտեղ հստակ ներկայացնելով այն բոլոր տվյալները, որոնցով Պատվիրատուն միանշանակ կհասկանա առաջարկվող ապրանքի ինքնությունը:

ՀՀ-ում չգրանցված դեղերի շրջանառությունը արգելված է և գնման ընթացակարգերով կարող են ձեռքբերվել միայն դեղերի գրանցամատյանում գրանցված դեղերը: Այդ փաստը հաստատված է <Դեղերի մասին> ՀՀ օրենքով, ինչպես նաև ՀՀ կառավարության 02.05.2013թ. թիվ 502-Ն որոշմամբ:

Ընկերության կողմից առաջարկված դեղը ներկայացված պարամետրերով, ծագման երկիրը՝ Ռուսաստան, արտադրողը՝ Սիթեզ ԲԲԸ, ապրանքային նշանը՝ ամպիցիլին ն/աղ 1գ, ազդող նյութը ամպիցիլին 1000 մգ, միակն է ՀՀ դեղերի գրանցամատյանում, ուստի Պատվիրատուին առավել քան բավարար են այդ ներկայացված տեղեկությունները դեղը ճանաչելու, ինչպես նաև հրավերի պահանջին համապատասխանող գնահատելու համար:

Հատկանշական է այն, որ Ընկերության առաջարկած դեղը ընդունելի է Պատվիրատուի կողմից, որը այդ փաստը չի էլ հերքում:

Ընկերության կողմից որպես բողոքի իրավական հիմք նշվել է հետևյալը.

<Վարչարարության մասին> ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ Վարչարարություն իրականացնելիս վարչական մարմիններին արգելվում է միայն ձևական պահանջների պահպանման նպատակով անձանց ծանրաբեռնել պարտականություններով կամ մերժել

նրանց որևէ իրավունք տրամադրելը, եթե նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են:

Նույն օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ Վարչարարությունը պետք է ուղղված լինի ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով հետապնդվող նպատակին, և դրան հասնելու միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր:

<Գնումների մասին> ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ Օրենքի նպատակն է գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացումը: Օրենքի սկզբունքն է՝ <պայմանագրի կնքման նպատակով մաղնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում>, այլ ոչ թե ձևական պահանջներով մրցակցության սահմանափակումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

2. Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝

1) բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Ընկերությունը, խորհրդին ներկայացված բողոքով խնդրել է պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին փոփոխելու 26.12.2017թ. նիստի թիվ 5 արձանագրության 1.2 և 1.3 կետերով ընդունված որոշումները՝ թիվ 1-ին, 4-րդ և 6-րդ չափաբաժինների մասով և Ընկերությանը ճանաչել հաղթող մասնակից վերը նշված չափաբաժինների մասով:

Ամփոփելով վերոգրյալը, Ընկերությունը հայտնել է, որ <Վազա Ֆարմ> ՍՊԸ-ն ապահովել է հրավերով նախատեսված ներկայացման ենթակա փաստաթղթերի բովանդակային պահանջները և Ընկերության հայտը մերժելով Պատվիրատուն խախտել է <Վարչարարության մասին> ՀՀ օրենքի 5-րդ և 8-րդ հոդվածների, Կարգի 32-րդ կետի, Օրենքի 3-րդ և 34-րդ հոդվածների պահանջները:

Եվ հանձնաժողովի ոչ իրավաչափ գործողությունների արդյունքում Պատվիրատուն նույն դեղամիջոցը ձեռք է բերելու այլ մասնակիցներից ավելի բարձր գներով՝ ՀՀ պետական բյուջեին պատճառելով 2 303 120 ՀՀ դրամի ֆինանսական վնաս:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 12.01.2018թ. ժամը 11:00-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով Խորհրդին հայտնած դիրքորոշում

2. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները

ՀՀ պաշտպանության նախարարությունը Խորհրդին է ներկայացրել Ընթացակարգով պահանջվող փաստաթղթերը և 15.01.2018թ-ին թիվ ԴՎԱ/133 գրությամբ Խորհրդին հայտնել է, որ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտեր էին ներկայացրել թվով 13 մասնակիցներ, այդ թվում՝ <Վազա Ֆարմ> ՍՊԸ-ն:

Ընկերությունը գնահատող հանձնաժողովի կողմից առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել Ընթացակարգի թիվ 1-ին, 4-րդ և 6-րդ չափաբաժինների մասով: Ընկերության կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերի գնահատման արդյունքում արձանագրվել է, որ փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <Գնումների գործընթացի կազմակերպման> կարգի <այսուհետ՝ Կարգ> 47-րդ կետը՝ հանձնաժողովը 22.12.2017թ.-ին կայացած նիստում որոշեց առաջարկել Ընկերությանը սահմանված ժամկետում շտկել առկա անհամապատասխանությունները, սակայն Ընկերության կողմից շտկվել է արձանագրված անհամապատասխանությունների միայն մի մասը:

Հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը՝ հանձնաժողովը որոշել է Ընկերության ներկայացրած փաստաթղթերը գնահատել հրավերի պահանջներին ոչ համապատասխան և վերջինիս հայտը մերժել:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 12.01.2018թ. ժամը 11:00-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել վերոհիշյալ գրությամբ հայտնած դիրքորոշումը՝ ավելացնելով որ Ընկերությունը պատշաճ

կերպով ծանուցվել շտկելու արձանագրված անհամապատասխանությունները, սակայն Ընկերության կողմից շտկվել է արձանագրված անհամապատասխանությունների միայն մի մասը:

3. ԳԲԽ-ԱՄ-2018/01 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-ԱՄ-2018/01 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար «Դեղորայքի» ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ 9/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով «Վազա Ֆարմ» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել Ընթացակարգի թիվ 1-ին, 4-րդ և 6-րդ չափաբաժինների մասով:

2. Ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծի հավելված 1-ում՝ տեխնիկական բնութագրում (այսուհետ՝ Տեխնիկական բնութագիր) 1-ին, 4-րդ և 6-րդ չափաբաժինների դեղերը ներկայացված են հետևյալ տեսքով.

Չ/հ	Ապրանքի CPV անվանում	Միջազգային համընդհանուր (ջեներիկ) կամ ակտիվ բաղադրատարրերի անվանումները	Տեխնիկական հատկանիշներ		ԱՊՐԱՆՔԱՆ ԵՆԱՆԸ	ԱՐՏԱԴՐՈՂԻ ԱՆՎԱՆՆՈՒՄԸ	ԾԱԳՄԱՆ ԵՐԿԻՐԸ
			Դեղաձևը	Դեղաչափը և թողարկման ձևը (փաթեթավորումը)			
1	Վիտամիններ	Ասկորբինաթթու, ascorbic acid	Դեղապատիճներ, դեղահատեր	500մգ; (20) պլաստիկ տարայում և (20/2x10/) քլիստերում			
4	Պովիդոն յոդ d08ag02, d09aa09, d11ac06, g01ax11, r02aa15, s01ax18	Պովիդոն յոդ, povidone-iodine	Լուծույթ	100մգ/մլ, 1000մլ պլաստիկ շշիկ			
6	Ամպիցիլին j01ca01, s01aa19	Ամպիցիլին (ամպիցիլինի նատրիում), ampicillin (ampicillin sodium)	Դեղափոշի ներարկման լուծույթի	1000մգ, ապակե սրվակներ			

3. Տեխնիկական բնութագրի ներքևի հատվածում նշված է հետևյալը՝

Ծանոթություն.

- Դեղամիջոցների մնացորդային պիտանելիության ժամկետները հանձման պահին պետք է համապատասխանեն ՀՀ կառավարության 02.05. 2013թ. թիվ 502-Ն որոշման 7-րդ կետի պահանջներին, մասնավորապես 2,5 տարի և ավելի պիտանելիության ժամկետ ունեցող դեղերը հանձնման պահին պետք է ունենան առնվազն 2 տարի մնացորդային ժամկետ /ա ենթակետ/, իսկ մինչև 2,5 տարի՝ պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքերը՝ առնվազան պիտանելիության ժամկետի 2/3-ը /բ ենթակետ/:

- Մատակարարման ժամանակ անհրաժեշտ է ներկայացնել մատակարարված ապրանքատեսակների խմբաքանակի որակի սերտիֆիկատ:

- Մասնակցի առաջարկում դեղաձևի թողարկման ձևը (փաթեթավորումը) կարող է ներկայացվել ՀՀ գրանցված դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստր) առկա տվյալ դեղաձևի ցանկացած փաթեթավորմամբ /հիմք՝ ՀՀ կառավարության 02.05.2013թ. թիվ 502-Ն որոշմամբ հաստատված չափորոշիչների 3-րդ կետի 1) ենթակետ:

- Մատակարարման վայրը՝ ՀՀ ՊՆ 73014 զորամաս (ք. Արուսյան):

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.11.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 4.1 կետով կայացված որոշմամբ Հավելված 1-ի համաձայն՝ «Վազա Ֆարմ» ՍՊԸ-ն Ընթացակարգի թիվ 1-ին, 4-րդ և 6-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

5. Նույն արձանագրության 4-րդ կետի 4.2 ենթակետով որոշվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնելու Ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

6. Ընկերության կողմից 6.1 հավելվածը՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, ներկայացվել է հետևյալ տեսքով.

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	անվանումը	ապրանքային նշանը	արտադրողի անվանումը	ծագման երկիրը	տեխնիկական բնութագրերը
1	Ասկորբինաթթու	Վիտամին C 500մգ կամ դեղահատեր	Նոկի Ռեպլեկֆարմ	Հայաստան Ռեպլեկֆարմ	500մգ(20) պլաստիկ տարայում և (20/2x10/) բլիստերում
4	Պովիդոն յոդ.	Բետադինոկ Լ-թ 10% 1000մլ	Նոկի	Հայաստան	100մգ/մլ, 1000մլ, պլաստիկ շիկ
6	Ամպիցիլին (ամպիցիլինի նատրիում)	Ամպիցիլին- ն/աղ 1գ N1	Սինթեզ	Ռուսաստան	1000 մգ, ապակե սրվակներ

7. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.12.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1-ին կետի 1.1 ենթակետով արձանագրվել է, որ «Վազա Ֆարմ»

ՄՊԸ-ի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի (հավելված 6.1) լրացման կարգում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես.

- Ապրանքային նշան դաշտում լրացված են ցուցանիշներ, որոնք պետք է լրացված լինեին «Տեխնիկական բնութագրեր դաշտում», «Ծագման երկիր» դաշտում նշել առաջարկվող ապրանքի ծագման երկիրը: Անհրաժեշտ է սյունակները լրացնել վերնագրերին համապատասխան, ինչը նշված պահանջը հստակ սահմանված է ընթացակարգի հրավերով:

- Մասնակցի կողմից 1-ին չափաբաժնի մասով առաջարկվել է «Դեղապատիճ կամ դեղահատ» անհրաժեշտ է հստակեցնել առաջարկվող ապրանքի դեղաձևը:

- Բացակայում է 6-րդ չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքի դեղաձևը

- Ներկայացված Հավելված 6-ը (առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով պահանջվող փաստաթղթերի ներկայացման դիմում) և Հավելված 6.1-ը (առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր) չեն համապատասխանում ընթացակարգի հրավերի 8.19 ենթակետով սահմանված պահանջին, նշված հայտարարությունները հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

- Մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում «Հավելված 6.1» ներառված չեն Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի «Ծանոթություն» մասով սահմանված հետևյալ դրույթները.

- Դեղամիջոցների մնացորդային պիտանելիության ժամկետները հանձման պահին պետք է համապատասխանեն ՀՀ կառավարության 02.05. 2013թ. թիվ 502-Ն որոշման 7-րդ կետի պահանջներին, մասնավորապես 2,5 տարի և ավելի պիտանելիության ժամկետ ունեցող դեղերը հանձնման պահին պետք է ունենան առնվազն 2 տարի մնացորդային ժամկետ /ա ենթակետ/, իսկ մինչև 2,5 տարի պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքերը՝ առնվազան պիտանելիության ժամկետի 2/3-ը /բ ենթակետ/:

- Մատակարարման ժամանակ անհրաժեշտ է ներկայացնել մատակարարված ապրանքատեսակների խմբաքանակի որակի սերտիֆիկատ:

8. Նույն արձանագրությամբ, հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետը, հանձնաժողովը 22.12.2017թ. ժամը 11:35-ին կայացած նիստում որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել Ընկերությանը մինչև կասեցման ժամկետի ավարտը

շտկել վերը նշված անհամապատասխանությունները, որի վերաբերյալ Ընկերությունը պատշաճ կերպով ծանուցվել է:

9. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 26.12.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 5 արձանագրության 1-ին կետի 1.3 ենթակետով կայացված որոշմամբ, հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը, մերժել է <Վազա Ֆարմ> ՍՊԸ-ի հայտը, այն հիմնավորմամբ, որ վերջինիս կողմից ներկայացված փաստաթղթերում չշտկվեցին 22.12.2017թ. ծանուցմամբ պահանջված հետևյալ անհամապատասխանությունները.

- 6-րդ չափաբաժնի մասով մասնակից կողմից չնշվեց առաջարկվող ապրանքի դեղաձևը,
- շտկմամբ ներկայացված Հավելված 6-ը և Հավելված 6.1-ը հաստատված չէին էլեկտրոնային թվային ստորագրությամբ,
- շտկմամբ ներկայացված Հավելված 6.1-ում ներառված չէ ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի «Ծանոթություն մասով սահմանված դրույթները»:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

«Ը գնումների բողոքարկման խորհուրդ, ռաումնասիրելով «Վազա Ֆարմ» ՍՊԸ-ի 08.01.2018թ. ներկայացրած բողոքը՝ կից նյութերով, ՀՀ պաշտպանության նախարարության 15.01.2018թ. թիվ ԴՎԱ/133 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի և 6-րդ մասի համաձայն՝

5. Առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ հրավերով սահմանված ժամկետում՝

1) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

2) հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

6. Հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

« կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է նաև առաջարկվող ապրանքային նշանն արտադրողի անվանումը, ծագման երկիրը, ապրանքի տեխնիկական բնութագրերը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ Հրավերով նախատեսվում է նաև, որ էլեկտրոնային եղանակով համարումներն իրականացվում են տեղեկություններն էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների, որի ժամանակ ծանուցումներն իրականացվում են թղթային եղանակով: Հրավերով և հայտով նախատեսվում են պատվիրատուի և մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեները: Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի արտատպումը պետք է տեսանելի լինի փաստաթղթի վրա, իսկ հավաստագիրը՝

գետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով: Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ Առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը

նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից:

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Այսպես, ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար դեղերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է գնանշման հարցման ընթացակարգ, որի պայմանագրի նախագծի հավելված 1-ում՝ տեխնիկական բնութագրում 1-ին, 4-րդ և 6-րդ չափաբաժինների դեղերը ներկայացված են հետևյալ տեսքով.

Ձ/հ	Ապրանքի CPV անվանում	Միջազգային համընդհանուր (քններիկ) կամ ակտիվ բաղադրատարրերի անվանումները	Տեխնիկական հատկանիշներ		ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆԸ	ԱՐՏԱԴՐՈՂԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԾԱԳՄԱՆ ԵՐԿԻՐԸ
			Դեղաձևը	Դեղաչափը և թողարկման ձևը (փաթեթավորումը)			
1	Վիտամիններ	Ասկորբինաթթու, ascorbic acid	Դեղապատիճներ, դեղահատեր	500մգ; (20) պլաստիկ տարայում և (20/2x10/) բլիստերում			
4	Պովիդոն յոդ, d08ag02, d09aa09, d11ac06, g01ax11, r02aa15, s01ax18	Պովիդոն յոդ, povidone-iodine	Լուծույթ	100մգ/մլ, 1000մլ պլաստիկ շշիկ			
6	Ամպիցիլին j01ca01, s01aa19	Ամպիցիլին (ամպիցիլինի նատրիում), ampicillin (ampicillin sodium)	Դեղափոշի ներարկման լուծույթի	1000մգ, ապակե սրվակներ			

Իսկ Տեխնիկական բնութագրի ներքևի հատվածում նշված է հետևյալը՝
Ծանոթություն.

- Դեղամիջոցների մնացորդային պիտանելիության ժամկետները հանձման պահին պետք է համապատասխանեն ՀՀ կառավարության 02.05. 2013թ. թիվ 502-Ն որոշման 7-րդ կետի պահանջներին, մասնավորապես 2,5 տարի և ավելի պիտանելիության ժամկետ ունեցող դեղերը հանձման պահին պետք է ունենան առնվազն 2 տարի մնացորդային ժամկետ /ա ենթակետ/, իսկ մինչև 2,5 տարի պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքերը՝ առնվազան պիտանելիության ժամկետի 2/3-ը /բ ենթակետ/:

- Մատակարարման ժամանակ անհրաժեշտ է ներկայացնել մատակարարված ապրանքատեսակների խմբաքանակի որակի սերտիֆիկատ:

- Մասնակցի առաջարկում դեղաձևի թողարկման ձևը (փաթեթավորումը) կարող է ներկայացվել ՀՀ գրանցված դեղերի պետական գրանցամատյանում (ոեեստր) առկա տվյալ դեղաձևի ցանկացած փաթեթավորմամբ /հիմք՝ ՀՀ կառավարության 02.05.2013թ. թիվ 502-Ն որոշմամբ հաստատված չափորոշիչների 3-րդ կետի 1) ենթակետ:

- Մատակարարման վայրը՝ ՀՀ ՊՆ 73014 գորամաս (ք. Աբովյան):

Ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ն հայտի թիվ 4 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/1» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված մասնակցության դիմումում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին:

Նույն հայտարարությամբ մասնակիցը պարտավորվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/1» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների)՝ անվանումը, ապրանքային նշանը, արտադրողը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ 2-ի 3-րդ կետի 3.1 ենթակետով սահմանվել է, որ Ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովի քարտուղարի՝ սույն հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստին

ուղարկելու միջոցով, հանձնաժողովին է ներկայացնում սույն հրավերի 6-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում է իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված N 6.1-ի.

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.11.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 4.1 կետով կայացված որոշմամբ Հավելված 1-ի համաձայն՝ «Վազա Ֆարմ» ՍՊԸ-ն Ընթացակարգի թիվ 1-ին, 4-րդ և 6-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից, որին առաջարկվել է ներկայացնելու Ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

Ընկերության կողմից 6.1 հավելվածը՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, ներկայացվել է հետևյալ տեսքով.

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	անվանումը	ապրանքային նշանը	արտադրողի անվանումը	ծագման երկիրը	տեխնիկական բնութագրերը
1	Ասկորբինաթթու	Վիտամին C 500մգ դպճ կամ դեղահատեր	Նոկի Ռեպլեկֆարմ	Հայաստան Ռեպլեկֆարմ	500մգ(20) պլաստիկ տարայում և (20/2x10/) բլիստերում
4	Պովիդոն յոդ.	Բետադինոկ Էթ 10% 1000մլ	Նոկի	Հայաստան	100մգ/մլ, 1000մլ, պլաստիկ 22իկ
6	Ամպիցիլին (ամպիցիլինի նատրիում)	Ամպիցիլին-ն/աղ 1գ N1	Սինթեզ	Ռուսաստան	1000 մգ, ապակե սրվակներ

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.12.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1-ին կետի 1.1 ենթակետով արձանագրվել է, որ «Վազա Ֆարմ» ՍՊԸ-ի

կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի (հավելված 6.1) լրացման կարգում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես.

- Ապրանքային նշան դաշտում լրացված են ցուցանիշներ, որոնք պետք է լրացված լինեին «Տեխնիկական բնութագրեր դաշտում», «Ծագման երկիր» դաշտում նշել առաջարկվող ապրանքի ծագման երկիրը: Անհրաժեշտ է սյունակները լրացնել վերնագրերին համապատասխան, որի պահանջը հստակ սահմանված է ընթացակարգի հրավերով:

- Մասնակցի կողմից 1-ին չափաբաժնի մասով առաջարկվել է «Դեղապատիճ կամ դեղահատ» անհրաժեշտ է հստակեցնել առաջարկվող ապրանքի դեղաձևը:

- Բացակայում է 6-րդ չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքի դեղաձևը

- Ներկայացված Հավելված 6-ը (առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով պահանջվող փաստաթղթերի ներկայացման դիմում) և Հավելված 6.1-ը (առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր) չեն համապատասխանում ընթացակարգի հրավերի 8.19 ենթակետով սահմանված պահանջին, նշված հայտարարությունները հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

- Մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում «Հավելված 6.1» ներառված չեն Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի «Ծանոթություն» մասով սահմանված հետևյալ դրույթները.

- Դեղամիջոցների մնացորդային պիտանելիության ժամկետները հանձման պահին պետք է համապատասխանեն ՀՀ կառավարության 02.05. 2013թ. թիվ 502-Ն որոշման 7-րդ կետի պահանջներին, մասնավորապես 2,5 տարի և ավելի պիտանելիության ժամկետ ունեցող դեղերը հանձնման պահին պետք է ունենան առնվազն 2 տարի մնացորդային ժամկետ /ա ենթակետ/, իսկ մինչև 2,5 տարի պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքերը՝ առնվազան պիտանելիության ժամկետի 2/3-ը /բ ենթակետ/:

- Մատակարարման ժամանակ անհրաժեշտ է ներկայացնել մատակարարված ապրանքատեսակների խմբաքանակի որակի սերտիֆիկատ:

Նույն արձանագրությամբ, հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետը, հանձնաժողովը 22.12.2017թ. ժամը 11:35-ին կայացած նիստում որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել Ընկերությանը մինչև կասեցման ժամկետի ավարտը

շտկել վերը նշված անհամապատասխանությունները, որի վերաբերյալ Ընկերությունը պատշաճ կերպով ծանուցվել է:

Ընկերության կողմից Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ներկայացվել է 6.1 հավելվածի՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի, շտկված տարբերակը հետևյալ տեսքով.

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	անվանումը	ապրանքային նշանը	արտադրողի անվանումը	ծագման երկիրը	տեխնիկական բնութագրերը
1	Ասկորբինաթթու	Վիտամին C 500 մգ դպճ	Նոկի	Հայաստան	500մգ(20) պլաստիկե տարայում և (20/2x10/) բլիստերում
4	Պովիդոն յոդ.	Բետադինոկ էթ 10% 1000մլ	Նոկի	Հայաստան	100մգ/մլ, 1000մլ, պլաստիկե շիկ
6	Ամպիցիլին (ամպիցիլինի նատրիում)	Ամպիցիլին- ն/աղ 1գ N1	Սինթեզ	Ռուսաստան	1000 մգ, ապակե սրվակներ

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 26.12.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 5 արձանագրության 1-ին կետի 1.3 ենթակետով կայացված որոշմամբ, հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը, մերժել է «Վազա Ֆարմ» ՍՊԸ-ի հայտը, այն հիմնավորմամբ, որ վերջինիս կողմից ներկայացված փաստաթղթերում չշտկվեցին 22.12.2017թ. ծանուցմամբ պահանջված հետևյալ անհամապատասխանությունները.

- 6-րդ չափաբաժնի մասով մասնակից կողմից չնշվեց առաջարկվող ապրանքի դեղաձևը,
- շտկմամբ ներկայացված Հավելված 6-ը և Հավելված 6.1-ը հաստատված չէին էլեկտրոնային թվային ստորագրությամբ,

• շտկմամբ ներկայացված Հավելված 6.1-ում ներառված չէ ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի «Ծանոթություն մասով սահմանված դրույթները»:

Ամփոփելով վերոգրյալ փաստերը, Խորհուրդն արձանագրում է, որ Ընթացակարգի հրավերի Տեխնիկական բնութագրի 6-րդ չափաբաժնի համար «Դեղաձևը» սյունակում նշվել է «Դեղափոշի ներարկման լուծույթի», մինչդեռ «Վազա Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից շտկված տարբերակով ներկայացված հավելված 6.1-ում կրկին չի նշվել առաջարկվող ապրանքի դեղաձևը, ինչը չի համապատասխանում Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրին, ինչպես նաև վերջինիս կողմից շտկմամբ ներկայացված Հավելված 6-ը և Հավելված 6.1-ը կրկին հաստատված չէին էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի պահանջը հստակ շարադրված է Ընթացակարգի հրավերի 8-րդ կետի 8.19 ենթակետով, ինչպես նաև Կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետով:

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից բողոքով ներկայացված այն պնդմանը, որ Կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետով հստակ շարադրված է այն, որ Մասնակիցը էլեկտրոնային փոստի միջոցով տեղեկությունները /փաստաթղթերը/ ուղարկում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ կամ բնօրինակ փաստաթղթից արտատպված /սկանավորված/ տարբերակով, ինչը և կատարել է Ընկերությունը, ապա Խորհուրդն արձանագրում է, հետևյալը.

Կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ Հրավերով նախատեսվում է նաև, որ էլեկտրոնային եղանակով համարումներն իրականացվում են տեղեկություններն էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների, որի ժամանակ ծանուցումներն իրականացվում են թղթային եղանակով: Հրավերով և հայտով նախատեսվում են պատվիրատուի և մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեները: ***Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը պետեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ***, որի արտատպումը պետք է տեսանելի լինի փաստաթղթի վրա, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով: ***Գնման ընթացակարգն***

էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Վերը նշված հոդվածով հստակ սահմանվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով, ուստի Խորհուրդը գտնում է, որ «Վազա Ֆարմ» ՍՊԸ-ն, հանդիսանալով ՀՀ ռեզիդենտ մասնակից, Հավելված 6-ը և Հավելված 6.1-ը ներկայացնելով հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով, գործել է Կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետով սահմանված պահանջի խախտմամբ:

Այսպիսով, Ընթացակարգի հրավերի Մաս I-ի 8-րդ կետի 8.20-րդ ենթակետի 2-րդ պարբերության համաձայն՝ Սույն հրավերի 1-ին մասի 8.17 կետով նախատեսված որակավորման պահանջները հիմնավորող փաստաթղթերը գնահատելու նպատակով հրավիրվող նիստում առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված, ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված, որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի և (կամ) ապրանքի ամբողջական նկարագրի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շփոթել անհամապատասխանությունը: Ընդ որում ծանուցմանը պարտադիր կցվում է հանձնաժողովի նիստի արձանագրության պատճենը, որում պարտադիր և մանրամասն պետք է նկարագրված լինեն գնահատման արդյունքում արձանագրված

անհամապատասխանությունները, ներառյալ ապրանքի ամբողջական նկարագրի վերաբերյալ:

Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակցից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Ինչ վերաբերում է «Վազա Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից բողոքով ներկայացված այն դիտարկմանը, որ Հարվերի 2-րդ մասի 2-րդ կետով սահմանված են այն փաստաթղթերը, որոնցից բաղկացած է հայտը և որ հայտերը բացվելուց հետո ներկայացվող փաստաթղթերը չեն կարող հայտ համարվել, ապա Խորհուրդն արձանագրում է, որ նման դիտարկումն անհիմն է հետևյալ հիմնավորմամբ.

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ հայտը հրավերի հիման վրա մասնակցի կողմից ներկայացվող առաջարկն է:

Օրենքի 30-րդ հոդվածը սահմանում է, որ Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: **Հայտը ներառում է մասնակցի հաստատագրած՝**

- 1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.
- 2) գնային առաջարկը.
- 3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Այսպիսով Խորհուրդն արձանագրում է, որ «Վազա Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից Կարգի 47-րդ կետով սահմանված կարգով և ժամկետում շտկված և կրկին գնահատող հանձնաժողովին ներկայացված Հավելված 6-ը և Հավելված 6.1-ը չեն համապատասխանում Ընթացակարգի հրավերի պահանջներին:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Նման պայմաններում խորհուրդը գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մերժելով «Վազա Ֆարմ» ՍՊԸ-ի հայտը գործել է իրավաչափ:

Իսկ ինչ վերաբերում է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված այն անհամապատասխանությանը, որ Մասնակցի կողմից անաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում «Հավելված 6.1» ներառված չեն Ընթացակարգի հրավեի տեխնիկական բնութագրի «Ծանոթություն» մասով սահմանված դրույթները, ապա սույն մասով խորհուրդն արձանագրում է, Ընթացակարգի հրավերով սահմանված չէ, որ տեխնիկական բնութագրի «Ծանոթություն» մասով սահմանված դրույթները հանդիսանում են պարտադիր պայմաններ և պետք է ներառվեն մասնակցի կողմից ներկայացվող 6.1 հավելվածում, ուստի խորհուրդը գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը սույն մասով արձանագրելով անհամապատասխանություն գործել է ոչ իրավաչափ:

Ելնելով վերոգրյալից, խորհուրդը գտնում է, որ «Վազա Ֆարմ» ՍՊԸ-ի բողոքը հիմնավոր չէ և ենթակա է մերժման:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Վազա Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 08.01.2018թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝



ՄՇԵՐ ԱՆԱՆՅԱՆ